

տարւոյն չորս եղանակներու հետ, արեւելի-
նային տարին լուսնականէն 11 օր աւելի կը
համընթանար ընտելեան կարգին, եւ անով
կը դիւրացնէր թէ հարկատուութիւնը, եւ թէ
հարկահանութիւնը, այնու որ երկրագործը
իր հարկերը կու տար արժաւորներով. եւ
հարկահանները կը ստանային բերքերը որո-
շուած չըջանին:

Նկատելով այս իրողութիւնը, զիջաւ
պետութիւնը, որ հպատակ ժողովուրդները
հետեւին արեւելեան (սելեւկեան) տո-
մարին, պահանջելով միայն, որ տարին հիշ-
բէթ թուականը կրէ: Այս նորանշան թուա-
կանը կոչուեցաւ խարաջի, կամ խալոններու
թուական¹:

23. ՀԱՅՈՑ ԹՈՒԱԿԱՆԸ

Եղեպտական, Նարոնասար փարաւոնի
ըստած, տոմարը շարժական է. ունի 12 ա-
միս 30ական եւ 5 աւելեաց օրերով (365
օր), եւ չորս տարի միանգամ նահանջ: Ըն-
դունուած էր ան նաեւ կապալադոկիա եւ
Պարսկաստան: Նոյնը ստացած են նաեւ
Հայերը Քրիստոսէ յառաջ 488ին, Պարսիկնե-
րու միջնորդութեամբ²: Այս ուսողական
թուականը իբր 1000 տարի յետոյ դործաւա-
կան թուական հռչակուած է, ելակէտ առ-
նելով 552, յուլիս 11: Առ այս շարժառիթ
յառաջ կը բերեն ուշ ժամանակի մատենա-
գիրները «Անդրէաս» տոմարագետի գատկա-
ցոյց երկհարիւրակը, որ կը լրանար Յուս-
տինիանոս Ա.ի (527—565) օրով, այսինքն
552ին: «Անդրէասի» անունին տակ, ինչպէս
կը կարծեմ, պէտք է իմանալ Անիիանոս
եղեպտացի երէցը, որ Ե. դարու առաջին
քառորդին բազմապատկելով լուսնի 19 եւ
արեւակի 28 բոլորակները գտած էր հինդ-
կու տար, թէ ամէն 532 շրջանին լուսնի ԺԴ
նոյն ամսոյն, նոյն շաբաթի օրը կը հան-
դիպի: Այսպէս այս հինդհարիւրակա կրնար
մշտնջենաւոր գատկացոյց ծառայել: Որով-
հետեւ Անիիանոս այս գիտը հրապարակ
հանեց Ե. դարու առաջին քառորդին ի Կոս-
տանդինուպոլիս, եւ անոր վերջին երկհա-
րիւրակը հայերէն թարգմանութեամբ Հայ-

աստան բերուած պիտի ըլլայ իբր 430ին, եւ
դործածութեան առնուած 430—552 տարի-
ներուն: Աւանդութիւնը կ'ըսէ թէ այս երկհա-
րիւրակին լրանալէն ետքը Հայոց եկեղեցին
գատկացոյց չունեցաւ ժամանակ մը եւ ստի-
պուեցաւ դիմել զրացի Եկեղեցիներուն,
իմնալու համար դատելի օրը:

Յովհաննէս պատմաբան Կաթողիկոս կը
գրէ. «Անաստաս հայրապետին (660—667)
հողացեալ վասն հայկական տոմարի, զի
թերեւս անշարժ զնա ըստ այլոց ազգաց մար-
թապէ յօրինել, զի միշտ անշարժ լինիցին
տօնք տարեկանաց կամ յեղափոխ յեղա-
նակք ժամանակաց: Վասն որոյ եւ առ ինքն
զԱնանիա Անեցի կոչեալ, որ բանիբուն այնմ
արուեստի էր հմուտ, հրամայէ նմա ստեղ-
ծադործել զինդրելին իւր: Իսկ նորա ջանի
վերայ եղեալ եւ ըստ բոլոր ազգաց պայմանի
անշուշտ յօրինեալ զկարգ հայկական տո-
մարի, զի բարեմեազունից ումանց եւ
գմբէս կշռադատեալ՝ մի կարօտացուի գալ
ի գուգաւորութիւն Հռովմայեցոց: Եւ մինչ-
դեռ խորհէր մեծն Անաստաս ժողովօք եպիս-
կոպոսաց զեղեայսն հաստատել՝ վախճան
կենաց նմա ժամանէր...: Անիոյթ զկնի եկե-
լոցն այսմիկ արարեալ՝ եւ զառաջին մշտա-
խաղաց շրջագայեալ կարգն կալեալ» (էջ
92—93. Ղուկ.):

Անանիա պատրաստեց երկտոմարեան
հինդհարիւրակ բոլորակ մը աղիւսակաձեւ,
ուր 532 (552—1084) մէն մի տարւոյ համար
մէկ աչքի վրայ տուած է տոմարացոյցը,
տօնացոյցը, լուսնա- եւ արեւակնացոյցը,
ամսացոյցը, օրացոյցը եւ ժամացոյցը: Տո-
մարներէն մին է յուլեանը, երկրորդը հայ-
կականը, զաստուրուած դէմ ընդառդէմ, եր-
կու թուղթի մէկուն ներքին եւ երկրորդին
արտաքին երեսի վրայ: Այս համբերատարաշ-
խատութեամբ պատրաստուած տոմարական
գրուածքը պիտի անուանեմ Անանիա Ծիրա-
կացոյ Հինդհարիւրամեակ, զոր առած զե-
տեղած է Դաւիթ Մաշկոտն կոչուած գիտնա-
ւոր քահանայն իր բազմահարուստ «Մատե-
նադարանին» մէջ, գրուած իր հսկողութեան
տակ իր Ղուկաս օրդէնէն 981ին, պահուած
Երեւանի Մատենադարանի Թ. 2679ի
մէջ³:

³ Անանիա Ծիրակացու Մատենադարութիւնը,
հրատ. Ա. Արքայանեան, Երեւան 1941, էջ 263—282:

Հինդհարիւրակովս զբաղեցաւ Անանիա
661—667 տարիներուն եւ անոր ելակէտ ըն-
տրեց 552 տարին, վասն զի ուղեց Անանիան
հինդհարիւրակի հետեւելով անոր երկրորդ
բոլորակը տալ, ուստի այն կէտէն սկիզբ առ-
նել, ուր կը լրանար առաջինը, այն է 552
տարին, երբ Հայոց Նաւասարդ 1 կը հանդի-
պէր յուլեան տոմարի յունուար 7ին:

Անանիայի նպատակը չէր Հայոց նոր
տոմար տալ. եւ ոչ ժամանակադրական
թուական, այլ լոկ գատկացոյց յուլեան ան-
շարժ եւ հայկական շարժական տոմարնե-
րու, հինդհարիւրակի բոլորակի գրութեամբ
եւ տոմարագիտական գիտելիքներով: Գլուխ
հանեց զայն եւ յանձնեց Անաստաս կաթողի-
կոսի, անոր իմաստութեան թողնելով ըն-
տրութիւնը: Կաթողիկոսը վախճանեցաւ յա-
ռաջ քան «Ժողովով եպիսկոպոսաց զեղեայսն
հաստատել»: Այս հարցով չհետաքրքրուեցան
յաջորդ կաթողիկոսները: Շարժական տո-
մարը մնաց իր ընթացքին վրայ. թէեւ եկե-
ղեցական տարին շատ կէտերու մէջ մերձե-
ցած էր յուլեան անշարժ տարւոյն. Յայտնու-
ած էր յունուար 6ին, Առաջաւորէն մինչեւ
Ս. Երրորդութիւն շրջանը ենթարկուած էր
Չատկական տօնին. Յունիս 24 ծնունդ Յով-
հաննու Մկրտչին, Ս. Խաչ սեպտ. 14, եւ
այլն: Այս շարքէն դուրս կը մնային միայն
Աւետուհի, Ծնունդ, Տեառն ընդ առաջ,
այնու որ Ծնունդը ըստ հինաւորաց սովո-
րութեան յունուար 6ին կը տօնուէր:

Թէպէտ տոմարի փոփոխութիւն տեղի
չունեցաւ, սակայն Անանիայի Չատկացոյցը
առաջնորդ եղաւ Հայոց եկեղեցւոյն երկար
դարեր ճշդելու գատկական տօնի օրը: Հինդ-
հարիւրեակը տեսաւ իր երեք բոլորակ հոլո-
վումը 20—552—1084—1616 եւ կը գտնուի
չորրորդ հոլովումի մէջ:

Անանիա այս հինդհարիւրակի բոլորակի
մէն մի տարի բաժնած է աղիւսակաձեւ աչ-
քերու, որոնց պաշտօնը նշանակած է վեց
աչքերու մէջ: Արդ երկրորդ աչքի մէջ կը
կարդանք «թուական» հինդհարիւրակի մէն
մի (1—532) տարիներու: Ինչպէս կ'երեւայ,
յընթացս երկու տասնեակ տարիներու յաճա-
խակի դործածութեամբ հինդհարիւրակիս
«թուականներու», սովորութիւն եղած ըլլայ
զայն նաեւ անցեալ դէպքերու, ծնունդի,
մահուան... տարիները հաշուելու, նախ

իրեւ «գատկացոյցի այս ինչ թուականին»,
եւ քայլ մը յառաջ երթալով իբրեւ «Հայոց
թուական» անուանել. իբր այսպիսի առաջին
անգամ կիրարկուած է 685ին. երկրորդ ան-
գամ 700ին Աղուանից Սիմէոն Կաթողիկոսի
ձեռնարկին ստորեւ:

Աղուանից պատմիչը աւելի վաղ ժամա-
նակներ ալ յիշած է Հայոց թուականը, որոնց
պիտի անդրադառնամ քիչ յետոյ: Այս տեղ
ցոյց պիտի տամ, թէ ան ձեռքի տակ
ունեցած է Անանիայի Հարիւրամեակը:
Պատմիչը Բ. մասի իններորդ գլխու-
վերջաւորութեան կը գրէ. «Սկսայց յա-
ռաջին <ամէն> ԺԼ. Բախանջին⁴, ի
Յայտնութենէն⁵ Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի <որ օր ԺԷ. է> մեհեկանի ամ-
սոյն, յերեսուն եւ հինգ ամէն Խոսրովու ար-
քայից արքայի»: Գլուխ Ժ. «Յառաջին ԺԼ.
Բախանջին սկիզբն պատմագրաբար⁶»: Ընդ-
դժուած տեղիքերը Աղուանից պատմիչին
յաւելուածներն են. մնացեալը Վիրոյ Կաթո-
ղիկոսին: Խոսրով Բ. Պարուէզ դահ բարձ-
րացաւ 590 ամառ, իր գահակալութեան ԼԵ.
տարին է 624: Այս տարւոյն Յայտնութիւնը
յունուար 6, մեհեկանի 17, ԺԼ նահանջը
կ'իյնայ Հինդհարիւրեակի 72 թուականին,
որ է Հայոց թուականի ՀԲ, յուլեան 623/24:
Այսպէս պէտք է իմանալ, ինչ որ գրեցի վե-
րագոյն § 9:

24. ԹՈՒԱԿԱՆ ՏԱՀԱՅ ԸՍՏ ԹՈՒՈՑ ՀԱՅԵՐԵՆ ՏՈՄԱՐԻ

Յիւլեցի վերը «խարաջի թուական»,
ասոր դործածութիւնը Հայոց քով կը գտնեմ
Թոմաս Արքեպիսկոպ Պատմութեան մէջ:
Պատմագիրը Ա. դարութեան 4. գլխու-
վերջը, եւ 5. գլխու խոստարանութեան մէջ
կը գրէ. «Բայց մեզ կայ առաջի ասել վասն
Ջափրայ եւ չար գործոց նորա... ի մերս
հանդիպեալ աւուրս, որ էր Հայոց 300 թուա-
կան: Վասն թաղաւորին Ջափրայ... եւ որ
ինչ ընդ սովաւ նախ քան զնոյ 2. յորելինի
եւ Հ <Դ> ոլոմպիադին, յետ Թ. եւ Ժ.
ընդլիկաւորին. յորում բովանդակին ժամա-
նակք բռնակալութեան Տաճկաց ամք Միւն
(տպ. Միւն) ըստ թուոյ հայերէն տումարի,

⁴ տպ. նահանջէն:

⁵ տպ. յարութեան:

⁶ Պատմ. Աղուանից, էջ 145 Ղուկ.:

¹ F. K. Ginzel, Handbuch der mathemati-
schen und technischen Chronologie, Bd. I, Leipzig
1906, S. 263—265.
² Ginzel, III, S. 314.

Թագաւորէ Տաճկաց թուրք ռմն Զափար ա-
նուն» (էջ 106 Պատկ.) :

Այս երկայնաւոր թուականութիւնը կը
հայե Մոտավաբէի ալ Ալլահ Աբու Ֆահր
Զափար խալիֆայի (847—861) դաժակալու-
թեան առաջին տարւոյն : Ունինք այս տեղ 5
թուականներ նոյնիմաստ .

ա. 2. յորեւեան, 6×50 նախ քան 3
(300 + 551 = 851) Հայոց թուական :

բ. ՀԳ ողորմաբաշ, 74×4 (296 + 551) =
847 :

գ. Յետ թ. եւ ժ. ընդհատներն . իմա-
յիբ «յետ 9. ինդիկտոնին, այն է 846,
10. ինդիկտոն, որ է 847. ա'յսպէս, վասն
զի Հայ ժի ինդիկտոն :

դ. Միե. (տպ. Միե. Բ կարգա' Ե) :
Ըստ թուոյ հայերէն տոմարի. հիւրէի 1—
232 լուսնական տարիները արեգակնային տո-
մարի հաշուով. 225 (+ 7 աւելաց ամբ =
232) . ուստի $225 + 622 = 847$: Այս «Միե»
խարաջի տարի է. հայ զրականութեան մէջ
յիշուած միայն այս տեղ :

25. ՏԱՃԿԱՅ ԸՍՏ ԹՈՒՈՅ ՀԱՅԵՐԷՆ ՏՈՄԱՐԻ
ՆՈՐԱԿԵՐՏ ԹՈՒԱԿԱՆ ԱՂՈՒԱՆԵՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ՄԷՁ :

Աղուանից պատմիչը կարգադրած է թո-
մաս Արծրունւոյ Պատմութիւնը եւ ծանօթա-
ցած «Միե» ըստ թուոյ հայերէն տոմարի
թուականութեան, եթէ այդու լրացած է ա-
նոր զոյութիւնը : Ուզած է ան իր Պատմու-
թիւնը ծաղկազարդել Հայոց եւ Տաճկաց
թուականներով, երբեմն մէկը, երբեմն
միւսը, նաեւ երկուքն ալ ի միասին գործա-
ծելով : Այս տեղ Տաճկաց թուականը Արծ-
րունւոյ յիշած խարաջի թուականը է, այլ
անկէ կամայ կամ ակամայ խոտորած նորա-
կերտ թուական մը, որ 615էն կը սկսի եւ
լուսնական անցնելով 622, հիւրայի 1, կը
նկրտի հասնիլ հիւ. 195 եւ Հայոց ՄԿ :

Այս մասին աղօտ ակնարկութիւն
մ'ըրած է Գ. 2ի վերջը. «Հարուն ԻԳ.
նստաւ ի Մահմատայ Ամիր Մուսին. եւ հայ
թուականն էր ՄԿ ամ» (810/11) : Հարուն առ
Ռաշիդ Մահմեդի ԻԳ. յաջորդէն էր. դահա-
կալեց 23 տարի (786—809, մարտ 24. Հիւ. 193⁷) : Աղուանից Պատմութեան Գ. 2 իր պա-

⁷ Müller I, 497.

հակալութեան տարին կը նշանակուէր 25,
թերեւս ասկէ աղղուած պատմիչը, մա-
հուան տարին Հայոց ՄԿ (հիւ. 195, յ. Բ.
811) համարած է :

Պատմիչը իր այս նորակերտ տոմարին
եւրկէտ ընտրած է հիւ. ըստ հայ տոմարի
195 եւ Հայոց ՄԿ (810/811) թուականները եւ
ընթացած է դէպի ետ հասնելու հիւ. 1
(= Հայոց ՀԱ), բայց դտած է ինքիւնքը փո-
խանակ յ. Բ. 622ի, անկէ 7 տարի յառաջ՝
615ին, ի հարկէ անդալարար. թերեւս հա-
մարելով թէ թուականը Մարգարէի յայտ-
նութեան կը սկսի : Այսպէս ալ համաձայ-
նութեան մէջ զնելով Հայոց եւ Տաճկաց տո-
մարները կը կազմէ իր ժամանակակա-
ն կանոնը :

Ամ Հայոց ԿԳ, ամ Տաճկաց Ա. (յ. Բ. 615) :

— Ամ խարաջի —

Ամ Հայոց ՀԱ. ամ Տաճկաց Ը. (622) Ամ
Հիւ. 1 : Ամ խարաջի Ա

Ամ Հայոց ՀԲ. ամ Տաճկաց Թ. (623)

Ամ Հիւ. 2. Ամ խարաջի Բ.

Կը տեսնուի ասկէ, թէ Պատմիչը ամե-
նեւին տեղեկութիւն չէ ունեցած Լուսնական
տոմարի մասին, ինչպէս է Տաճկաց (Արա-
բացոյ) տոմարը, 354 օրով, 11 օրով
նուազ արեգակնային տոմարէն, որ ունի 365
օր. այս պատճառաւ ալ ամէն 30 տարի տար-
ւով մը ոտտում կ'ընէ արեգակնային տարւոյն
վրայ. ուստի 622—810 շրջանին մինչ արե-
գակնային տոմարը 188 տարի կը հաշուէ,
լուսնական տոմարը 195, այսինքն 7 տարի
աւելի : Այս 7 տարիները գոյացած են հե-
տեւեալ կարգով .

	Յետա- դարձ	Յառաջա- դէմ
ա. 1— 19 (622—639)	621	196
բ. 20— 52 (640—671)	620	197
գ. 53— 86 (672—704)	619	198
դ. 87—119 (705—736)	618	199
ե. 120—153 (737—769)	617	200
զ. 154—186 (770—801)	616	201
է. 187—220 (802—834)	615	202

Երբ 195 հ. եւ ՄԿ տարի առ տարի վերէն
վար (195—1, ՄԿ—ԿԳ) իջնալով հասնինք
հիւ. 1 եւ Հայոց ԿԳ. պիտի գտնենք զմեզ
յուլեան տոմարի 615 թուի առաջ. եւ եթէ
1—195, ԿԳ—ՄԿ վեր ելնենք պիտի հաս-
նինք նոյն տոմարի 202 թուականին. վասն
զի նկատի չենք առած, որ հիւ. 195 լուսնա-

կան տարի է, եւ Հայոց ՄԿ արեգակնային
տարի է, ուստի կամ 195էն աւելաց 7 տա-
րիները դուրս հանելու է եւ կամ Հայոց ՄԿին
վրայ 7 տարի աւելցնելու է, որ անիմաստ է.
ինչպէս անիմաստ էին 195 արեգակնային
տարիներու 1—7 (615—621) թուականները :

Աղուանից պատմիչը եթէ հիւ. 195էն
հանած ըլլար աւելաց 7 տարիները պիտի
գտնէր Տաճկաց թուին ըստ հայերէն տո-
մարի (խարաջի) թուականը, զոր յիշած էր
Թոմաս Արծրունի :

Հիւրայի եւ Հայոց թուականները քով
քովի, տոմարական ուղիղ գործածութեամբ
կը դտնեմ երեւանի Մատենադարանի թիւ
2374 Աւետարանի յիշատակարանին մէջ.
«Յամի թուոյ Հայկազանց ՆԼԸ (989) եւ ըստ
թուոյ Հոռոմի ԶԽԲ (742 + 247 = 989).
յիւսկայնական բռնակալութեան ՅՀԹ (989).
Յովսէփեան Գարաբիւն Ա. Կաթ., Յիշատա-
կարանք ձեռագրաց. Ա., Անթիւրիաս 1951,
էջ 157) :

26. ՀԱՅՈՑ ԵՒ ՏԱՃԿԱՅ ԹՈՒԱԿԱՆՆԵՐԸ ԱՂՈՒԱՆԵՑ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՁ :

Պատմիչը իր արուեստական երկտոմա-
րեան ժամանակագրական քրոնիկոնը կազ-
մելէն ետքը, յեցած անոր վրայ, փորձած է
իր Պատմութեան 615—703 շրջանի զէպքերու
թուականներով ճշդել : Այս տեղիքներն են.
ա. «Ի ընդ ԿԵ ամի թուականին Հայոց
երեւեցաւ Մահմեան ի Մզին շահաստանի» :
Հայոց ԿԵ տարին է 616 յունիս 25. որ կը լրա-
նայ 617 յունիս 24ին :

բ. «Եւ յորժամ Հ. էր (Հայոց թուակա-
նին) եկն ի Գուճրեզն Արքահամու. ուստի
621 յունիս, որ կը համապատասխանէ հիւ.
1ին (622, յուլիս 16) :

Արաբական աւանդութիւնը շատ քիչ
կենսագրական տեղեկութիւններ պահած է
Մահմեդի նախահիւրէեան շրջանէն, այս
պատճառաւ այս Գ. 1 ուշադրութեան արժա-
նացած է Մահմեդի կենսագիրներէն (հմմտ.
Müller, I, 170) :

գ. «ԿԲ ամն հարաւայնոյ իշխանութեան
զոռոգին Մահմետայ» (Բ. 39) : Աղուանից
պատմիչին ծանօթ եղած է Հայոց ՃԼԳ.
թուականը, երբ իրարեւելք ասպատակեցին
Աղուանից, Վրաց եւ Հայոց աշխարհները

(Դաւիթ Բոկոսնի խմբագիր ժամանակա-
գրութիւն, էջ 399. ի զիրս Անանիա Շիրա-
կացոյ Մատենագրութիւն) : Հայոց ՃԼԳ
հանած է հիւ. 195էն եւ ստացած է 61/62
տարին :

դ. Միւսն Աղուանից կաթողիկոսը կը
ստորագրէր իր ձեռնակին տակ «Հայոց
ձԽԸ. հրոտից» եւ «Տաճկաց ԶԵ» (Գ. 88).
այն է յուլեան 699/700 մայիս (Հիւրէի ԶԵ.
704) :

ե. Մեզի հասած է Ձեռնակ մըն ալ, զոր
տուած են Աղուանից եպիսկոպոսներն եւ իշ-
խանները Միքայէլ Կաթողիկոսին. ստորեւ
գրուած է «ԶԸ թուականութեան <Տաճ-
կաց եւ ըստ թուականին ձԾԱ> Հայոց»
(Սամուէլ Անեցի. էջ 286) : Այսպէս լրաց-
նելով զրութեան տարին, ԶԸ կը համապա-
տասխանէ Հայոց ձԾԱ եւ յուլեան 702/703
տարւոյն :

Հիւրէի	Խարաջի	յետ Բրիտ.	Հայոց	Աղուա- նից	
			615	ԿԳ	1
			616	ԿԵ	2
			617	ԿԶ	3
			618	ԿԷ	4
			619	ԿԸ	5
			620	ԿԹ	6
			621	Հ	7
1 VII	16	1	622	ՀԱ	8
2		2	623	ՀԲ	9
3		3	624	ՀԳ	10
4		4	625	ՀԴ	11
5		5	626	ՀԵ	12
6		6	627	ՀԶ	13
7		7	628	ՀԷ	14
8		8	629	ՀԸ	15
9		9	630	ՀԹ	16
10		10	631	Զ	17
11 III	29	11	632	ԶԱ	18
12		12	633	ԶԲ	19
13		13	634	ԶԳ	20
14		14	635	ԶԴ	21
15		15	636	ԶԵ	22
16		16	637	ԶԶ	23
17		17	638	ԶԷ	24
18		18	639	ԶԸ	25
19		19	640	ԶԹ	26
20 XII	21	20	641	Ղ	27
21 XII	10 641	20	642	ՂԱ	28

կէք» (Գ. 12): Այս տեղիքս կը կրկնուի. «պատճառք (բանտարկութեան որդւոց վարաց Տրդատայ) հօրն նոցա զաշխարհս Արեւելից ի Տաճիկս տալն եղև»:

ՆԵՐՍԷՍ ԲԱԿՈՒՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ
(Գ. 3—9)

Աղուանից Պատմութեան այս գլուխները կը ծրարեն Ներսէս Կաթողիկոսի դէմ բացուած դատին հայող թուղթերը: Որովհետեւ այն տեղի դոյզն ինչ հարազատ եւ առաւել անհարազատ տարրեր կը նկատեմ, յարմար կը համարեմ նախ հարազատը տալ եւ ապա անհարազատ մասերը ապացուցնել:

Ներսէս, աւագանի անունով Բակուր, ընտրուած էր Գարգմանայ եպիսկոպոս. երբ վախճանեցաւ Եղիազար Կաթողիկոս (682), ընտրական ժողովը անոր յաջորդ հրաւիրեց Ներսէս եպիսկոպոսը (Գ. 3, 24):

Կաթողիկոսարանը կը գտնուէր առանձնակ Ուտիի Պարտաւ քաղաքին մէջ: Ան ունէր քաղաքէն ոչ շատ հեռու հովանոց—ամարանոց, Բերդակուր գիւղի մէջ, որուն առջեւն կը հոսէ Տրտու (Թարթառ) գետը:

Պարտաւի մէջ էր նաեւ Աղուանից նախագահ իշխանի ապարանքը:

Ներսէս Բակուր թէ ուսմանց ինչ ընթացք ըրած էր, մեզի ծանօթ չէ. բայց վկայուած է, թէ ան ունէր «գրեան, զորս լցեալ էր յարկեղս»: Գրասէրը պէտք է եղած ըլլայ նաեւ ընթերցասէր եւ իր կարգին մատենագիր:

Դժբախտաբար Կաթողիկոսարանի սարկաւազապետը եւ Ներսէսի յաջորդը Սիմէոն Կաթողիկոսը, որ ժառանգեց այդ «գրեան»ը, չէ հաղորդած մեզի զրբերու թիւն եւ անոնց բովանդակութիւնը. բայց տուած է անոնց միահամուռ որակը «լի հերձուածովք», ուստի արժանի յանձնուելու թարթար գետի ձորանքին. «առեալ զամենայն (զրեան) եւ ի գետն Տրտու յիւր հովոց տեղւոյն, որ Բերդակուրն կոչի» (էջ 340):

Եթէ այդ զրբերու մին կամ միւսը «հերձուածովք» էր, կային հոն անտարակոյս Ս. Գրոց մասեր ալ, նոյնպէս Յովհ. Ոսկերեանի եւ այլ Հայրերու Մեկնութիւնները, Ճառերը, Եղիշի ընդդէմ աղանոցը, Ագաթանգեղոսի, Փաւստոսի, Դ. Փարպեցւոյ եւ այլոց պատմագրութիւնները, ինչպէս նաեւ փիլիսոփայական գործոց նորագոյն թարգ-

մանութիւնները. դիրքեր, որոնք նոյն դարու զրատէրի զրադարանը պիտի կազմէին: Ահա զրադարան մը, զոր տղիտութիւնը կ'ոչնչացնէր:

Աւանդութիւնը չէ պահած իրմէ որ եւ է զրաւոր յիշատակ, բայց եթէ տեղիքս Ներսէս Կաթողիկոս մահուան օրհասին «եւ թագել զինքն նովին երկաթեօք եւ նոզկայ զՇերոյ, զի նա եղև առաջնորդ չարի նորա (Կաթողիկոսի) եւ Սպարամայ, վասն հաւաճառութեանն որ ընդ նա (Շերոյ) եւ ընդ Սպարամ ի վերայ իշխանութեանն» (Գ. 7):

Այս տողերը թէեւ տխրագին են, բայց պատմութեան համար թանկագին տապանագիր կարող են համարուիլ:

Ո՞վ էր բանտարկած Աղուանից Կաթողիկոսը չղթայակալ. «այն, որ էր առաջնորդ չարին», որ ոչ միայն Աղուանից Կաթողիկոսն այլեւ Սպարամ իշխանուէին բանտարկած եւ չղթայակալած էր: Ի՞նչ պատճառաւ վասն զի «ի վերայ իշխանութեան» ձեռնաժուլ եղած էր, այս ինքն կը պահանջէր Աղուանից Սպարամ տիկինէն, որ տեղապահ կարգուած էր իր ամուսնին, հրաժարի պաշտօնէն, եւ Շերոյի յանձնէ գահը: Երբ մերժեց իշխանուէին, բռնադրակեց Շերոյ իշխանութիւնը. բանտարկեց Սպարամ իրրեւ գահին տեղապահ եւ Կաթողիկոսը, վասն զի պաշտպան ներկայացաւ իշխանուէոյն: Երկուքն ալ վախճանեցան բանտի մէջ սովամահ: Շատ խորհուրդաւոր է Կաթողիկոսին վերջին խնդրուածքը. «թագել զինքն նովին երկաթեօք». որ կը յիշեցնէ այն չղթաները, որոնցմով կը պարծէր Առաքեալը:

Քաջ կը համարեմ այն զրիչը, որ համարձակեցաւ արձանագրել այս տողերը Աղուանից Պատմութեան մէջ:

Շերոյ փութաց ժողով գումարել Կաթողիկոսին «նշկահեալ» երեք եպիսկոպոսներով, եւ 11 ազատներով, ընտրելու նոր Կաթողիկոս եւ անոր ձեռքով նոզկել տալու Ներսէս Կաթողիկոսն իրրեւ հերձուածով եւ Սպարամ իշխանուէին անոր համախոհ:

Պատմութեան համար արժէքաւոր է այն հաւատարմութիւնը, թէ «Ներսէս կարու զաթոն ուղղափառութեամբ ամս ԺԴ եւ զչարափառութեանն ամս երեք եւ կէս»:

Կաթողիկոս կ'ընտրուի «Սիմէոն այր պարկէշտ», «սարկաւազապետ» ձերունի,

«եւ ձեռնադրեցին զնա» յիշեալ երեք ապամար եպիսկոպոսները «ի հայրապետութիւն Աղուանից. որ զպղտորունն Ներսիսի երարձ յաշխարհէն» (Գ. 7): Այս կը պատահի «ԵՁԵ. ամի Տաճկաց եւ ի հայ թուականիս ձԽԸ, յամսեանն հրոտից» (Գ. 8), այն է 700, մայիս-յունիս:

Այս չորս եւ կէս տարիներն են 695—699/700, մայիս-յունիս. ուստի այն շրջանը, ուր Վարագ Տրդատ կը գտնուէր կայսերական արքունիքը եւ Սպարամ կ'իշխէր Պարտաւ: Այս շրջանին կը հային այն տողերը, զորոնք Աղուանից պատմիչը զետեղած է Բ. 37 գլուխի մէջ. Վարագ Տրդատ «ընդունէր զգերագոյն գահն ի հօր եւ յարապակերպ իշխանէն Տաճկաց (°) սահմանաւ լինել կողմանն Արեւելից, իշխել ամենայն քաղաքութեանն Աղուանից եւ Ուտեացոց գաւառին եւ նուաճել ընդ ինքեամբ գամեմետին»:

Եթէ այսպիսի հրահանգ հասած է Կ. Պոլսէն տեղապահ Սպարամի, եւ նա գործադրած է, կարելի է, որ Կաթողիկոսն ալ ընդարձակած ըլլայ իր իրաւասութիւնը եւ հրաւիրած ըլլայ միաբնայ եկեղեցիներու հաւատացեալները խոստովանիլ Քաղկեդոնի ժողովոյն ճշգրտ դաւանութիւնը:

Ինչ կը թուի թէ այն պատմական դրուածքը, որ հեղինակուած է հայերէն Կ. դարու չորրորդ քառորդին, եւ հասած է մեզի անանուն, յունարէն թարգմանուած մեզի անանուն, յունարէն De rebus Armeniae խորագրի տակ, հեղինակութիւնն ըլլայ Ներսէս Կաթողիկոսի, 695—698 շրջանին: Գրուածքին նպատակն է ցոյց տալ պատմականօրէն, թէ Հայոց, Վրաց եւ Աղուանից եկեղեցիները այն հաւատքը, զոր տուաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ անվթար պահած են մինչեւ Զ. դարու կէսը. ապա Հայոց եկեղեցւոյ մէջ մուտ գտած է Ասորիներու միջնորդութեամբ միաբնայ վարդապետութիւնը: Ուստի կարելի է ենթադրել, թէ գրուածքին հրատարակութիւնը զրգոյ տուած ըլլայ դաւանաբանական վիճարանութիւններու «ուղղափառաց եւ չարափառաց» մէջ:

Բայց ի տեղի այսր ինչ դարձեալ գալ պիտի:

ՇԵՐՈՅ ՆԻ ԻՐ ԱԶԱՆՆԵՐԸ

Շերոյ կը յիշուի Աղուանից պատմութեան մէջ 699—701 տարիներուն: Հաւանօրէն ինքն էր մին այն «ի միապետորդոր տոհմակցացն Աղուանից», որոնք «անբեղոյ միտս ունէին» ընդ Վարագ Տրդատ, 685էն ի վեր (Բ. 26):

Տեսանք վերագոյն, թէ Վարագ-Տրդատ 694ին, երբ պիտի մեկնէր Կ. Պոլիս, իր աթոռին աթոռակալ, իշխանութեան կառավար նշանակած էր իր տիկինը Սպարամ: Իշխանը կը յուսար, թէ իր բացաղայութիւնը կարճատեւ պիտի ըլլայ. բայց զէպքերը բերին, որ հինգ տարի երկարի: Թէպէտ իշխանուէն այս հինգ բազմաշփոթ տարիներուն իշխանութեան սանձը ամուր բռնած կայսերապաշտ հաւատարմութեամբ պահեց երկիրը անսասան, սակայն ժամանակի պայմանները արաբական քաղաքականութեան կը միտէին: Հայաստան յարած էր Արաբներուն: Այս պատճառաւ ալ Աղուանից քաղաքագէտներէն մէկը — Վարագ-Տրդատի այն տոհմակիցներէն, որոնք նախանձաւոր էին իշխանական գահին, եւ այժմ այդ գահին վրայ տիկին մը կը տեսնէին — համարձակութիւն կ'ունենայ ներկայանալ Սպարամ իշխանուէոյ եւ զնել անոր առաջ ժամանակի պահանջը, թոթափել բիւզանդական լուծը եւ առնել արաբականը: Այդ իշխանն էր Շերոյ: Այնպէս կ'երեւայ թէ խօսակցութեան ներկայ էր նաեւ Ներսէս Աղուանից Կաթողիկոսը:

Խօսակցութիւնը հակաճառութեան կը փոխուի երբ Սպարամ տեղի չի տար այդ խորհուրդին, վասն զի չէր կրնար իր ամուսինն եւ երկու պատանդ որդիները վտանգի մատնել: Շերոյ կը պահանջէ իշխանուէին քաղաքական անպարկէզէն... եւ կը հեռանայ սպառնալիքով:

Կաթողիկոսը կը գուշակէ վտանգը, որ կը սպառնար Սպարամին, թերեւս եւ իրեն:

Նոյն երեկոյ կը կալանաւորուի իշխանուէին եւ կը դրուի բանտ: Կը փնտռուի նաեւ Կաթողիկոսը, որ թագնուած էր. կը գրտնուի յաջորդ օրը եւ կը տարուի ուր էր իշխանուէին: Կը չղթայակալուին երկուքն ալ:

Աղուանից իշխան կը հռչակուի Շերոյ. որ կ'ապստամբի Կայսրէն եւ կ'ենթարկէ Աղուանից աշխարհը Արաբացւոյ:

Շերոյ իր քայլերը արդարացնելու համար կը գումարէ ժողով եկեղեցականներու եւ ազատներու: Ժողովը կը նշուի Ներսէս կաթողիկոսը եւ իշխանուհին — առանց անոնց ներկայութեան — իբրեւ քաղկեդոնական կայսերապաշտ, աղանդաւոր: Առ այս հրատարակուած Ձեռնարկին ստորագրած են նորընտիր Սիմէոն կաթողիկոս եւ 3 եպիսկոպոս [7 վանականներ եւ 3 վանքերու] ի ղրկուորական կողմանէ Շերոյ Աղուանից իշխան եւ հետը 12 աղաթ: (Այս աղաթներու անուանացանկը կը կրկնուի յետոյ գլ. 10, էջ 348—349): «Գրեցաւ զիս այս յԶԵ. ամի Տաճկաց եւ ի հայ թուականիս ճՅԼ. յամսեանն հրոտից»:

Երկու ու կէս տարի յետոյ Շերոյ կը ստորագրէ. «Ես Շերոյ ապիսի պատրիկ, Գարդմանայ տէր եւ Աղուանից իշխան»:

Երբ վախճանեցաւ Սիմէոն կաթողիկոս եւ գումարուեցաւ ժողով նորընտիր կաթողիկոսի համար, թիկնածուն Միքայէլ քահանայ կը պահանջէ եպիսկոպոսներէն եւ ազատներէն հետեւեալ ձեռնարկը, որ անձանթ եղած է Աղուանից պատմիչին եւ պահուած է թղթոց զրգին մէջ¹:

ՁԵՌՆԱԿ. ՁՈՐ ԽՆԴԻՐԱՅ ՄԻՔԱՅԷԼ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ի ՇԵՐՈՅԷ

Ի ժամանակին, յորում կարգեցաւ ի քահանայապետութիւն Աղուանից Միքայէլ քահանայ, խօսեցաւ աթոռակցօքն իւրովք, որք էին.

Յովհաննէս Կապադակու եպիսկոպոս, Սահակ Ամարասու եպիսկոպոս, եւ եղիազար Հոշոյ եպիսկոպոս, եւ Իսրայէլ Մեծկուանից եպիսկոպոս, եւ Չաքարիա Մեծիւրեանց եպիսկոպոս, եւ Յովակիմ Գարդմանայ եպիսկոպոս. յաղագս բարեկարգութեան աշխարհիս եւ ուղղափառութեան հաւատոյս:

Արդ ես Շերոյ Ապիսի-պատրիկ, Գարդմանայ տէր եւ Աղուանից իշխան, Վարդ-Գրիգոր պատրիկ Աղուանից սպարապետ, Բարի Շահրփերդեան,

Չարուսիհր ի Վարդ-Գուրգաբեան, Թէոդորոս Վստամ յԱրեւմանեան, Ռ(ս)ստոմ ի Վաչագան ի Վարդաբեան, Յունաստահեան,

Վահան ի Վարդ-Վահանեան, Սմբատ ի Քարոյեան, Մահուժատ ի Ղանքարեան, Պատրիկ ի Քամդիւտան, Արեւքո ի Վարդեան, Շերոյ ի Մերգանչահեան, Վարդիշ ի Թամդիկան հիւպատոս, ՁԼ թուականութեանս <Տաճկաց եւ ճՅԱ> Հայոց:

Այսպէս կանոնեցաք, թէ յորժամ դուք ձեռնարկէք յաղագս Քաղկեդոնական աղանդոյն եւ կամ Մայրապոմեցոյն, եթէ վասն Պայլիկեանց եւ թէ վասն խառն ամուսնութեան եւ թէ զինչ եւ իցէ, ոչ ոք կարէ ելանել ըստ ձեր հրամանէ. եւ եթէ ոք ելանէ՝ յԱստուծոյ դատապարտեալ եղիցի, եւ դուք իշխան լիջիք ըստ կամաց ձերոց դատել եւ ոք իշխանաց չունի իշխանութիւն օգնել. եւ ի պայմանիս, զոր կարգեցաք, հաստատուն կացցուք:

Եւ կնքեցի զգիրս ես Շերոյ ապահիպատրիկ, Գարդմանից տէր եւ Աղուանից իշխան, հանդերձ ամենայն ազատօք:

Շերոյ վերջին անգամ կը յիշուի 704ին. «Յետ այսորիկ (Տաճիկք) զՇերոյ Աղուանից իշխանն ազատօքն հանդերձ տարան ի Տարօն եւ անտի յԱսորիս. եւ հայ թիւն լինէր ճՅԳ» (704²): Այս տարւոյն էր որ Հայոց ազատները ի Սրամ եւ ի Նախիջեւան հրակէղ եղան Արդմեիլիքի հրամանով: Թէ ինչ մահուամբ մեռան Շերոյ եւ անոր ազատները, ծանօթ չէ:

Շերոյի յաջորդն եղաւ հաւանօրէն «Եռանշահիկն Վաչական ի Պատրիկեան Աղուանից իշխան» (Գ. 17, էջ 368). որ կը յիշուի 712ին, հաւանօրէն որդին «Պատրիկ ի Քարոյեան» ի որ էր յարքայից զարմից (էջ 344, 348 եւ 349):

Կ'երեւի ասկէ, թէ Քաղկեդոնականաց հալածանքը շարունակուած է Շերոյի օրով:

(Շարունակելի:)

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

² Գ. 17, էջ 367:

¹ Էջմ. 58 եւ 100: Հրատարակած է Ա. Տէր-Միքէլեան, Սամուէլ Անեցի, Վաղարշապատ, 1893, էջ 286:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԵՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

(Շարունակելի:)

5. ԱՆՁՆՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1869)

Կարնոյ մէջ ալ ունեցած է իր ճիւղը Պոլսոյ «Անձնուէր»ը, հիմնուած 1860ին: 1869 զարնան կազմուած է Կարնոյ մէջ: 1869 Յուլիսին Պոլսոյ Մամուլ թերթը կը գրէ որ Կարնոյ մէջ ալ իր հալածողներն ունի «Անձնուէր Ընկերութիւն»ը, ակնարկելով նոյն Ընկերութեան Եւդոկիայի ճիւղին կրած հալածանքներուն (Մամուլ, Կ. Պ. 1869, էջ 248):

«Արծնեան Ընկերութեան» Տնօրէն Ժողովը նախաձեռնող եղած է Կարնոյ մէջ «Անձնուէր Ընկերութեան» ճիւղ մը բանալու (Հմմտ. Մամուլ, 1869, թ. 926):

6. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1869)

Պոլսոյ փոքր Մամուլին թղթակիցը՝ Չարմայր Միլոտիշ Յ. Աղապալեանց կը գրէ 1869 Յուլիս 17ին. «...քաղաքիս մէջ քանի մը ազգասէր երիտասարդ արիւնտաւորներ «Ուսումնասիրաց» Ընկերութիւն մը հաստատած են, որոյ նպատակն է՝ աղիւստ եւ անկարող ուսանողաց ձրիապէս գիրք, բուլք եւ պիտոյք մատակարարել» (Մամուլ Օրաթերք, Կ. Պ. 1869, թ. 400):

Հաւանօրէն 1869ի առաջին ամիսներուն հիմնուած է:

7. ԱՐԷՅՍԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1870)

Հիմնուած է 1870ի սկիզբը: Հիմնադիր նախաձեռնողն է Միլոտիշ Աղապալեան: Նպատակն է «փոքրիկ խնայողութիւններով արհեստաւորաց օգնական վարպետներուն (խալֆա) դրամադուլուս պատրաստել» (Արեւիկ, Կ. Պ. 1899, թ. 4165): Առաջին ամիսներուն արդէն ունեցած է 6—700 անդամ: Շարաթական բաժնեդիւնն է 20 փարա: Ունեցած է իր Կանոնները: Գործադիր Մարմինը կազմած են 12 հոգի: Շուտով բացած է 2 խանութ: Բաւական օգտակար եղած է ժողովուրդին (Մանգուսէի Էֆէնար, 1870, թիւ 1233): Ընկերութիւնս հին «կոռպերատիւ» մըն է:

8. ՎԱՐԳԱՆԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (?)

Կարնոյ մէջ 1880էն առաջ գոյութիւն ու-

նեցած է վարդապետ Ընկերութիւն մը, որուն ծագումը, հիմնադիրը եւ նպատակը անձանթ են: Միայն Պոլսոյ Մամուլն է որ կը յիշատակէ Ընկերութիւնս, ըսելով թէ 1880ին «Վարդապետ Ընկերութիւնը» միանալով ուրիշ երեք Ընկերութիւններու հետ՝ կը կազմեն միացեալ Ընկերութիւն մը՝ «Բարձր Հայոց Միութիւն» անունով (Մամուլ, 1880, թ. 2758):

9. ԴՊՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (?)

Տակաւին մինչեւ 1880 գոյութիւն ունեցած է Կարնոյ «Դպրաց Ընկերութիւնը», որուն ծագումի մասին ոչ մէկ աղբիւր գտած ենք: Կը յիշուի 1880ին, երբ կը միանայ ուրիշ Ընկերութիւններու հետ (Մամուլ, անդ):

10. ԸՆԹԵՐՅԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (?)

Կը յիշուի 1880ին իբրեւ նախկին, հին Ընկերութիւն մը, որ կը միանայ ուրիշ երեք Ընկերութիւններու հետ: 1880ին դեռ գոյութիւն ունէր (Տէս Մամուլ, 1880, թ. 2758):

11. ԸՆԿԵՐԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1873)

Հիմնուած է 1873ի գարնան: Իր վարչութիւնը կը կազմէին 1879ին.

Աղեքսանդր Տ. Ներսէսեան Ատենապետ
Գրիգոր Մըսրեան Ատենադպիր

Այս վարչութիւնը Կարնէն կը գրէ 1879 Ապրիլ 9 թուականով. «Մեր Ընկերութիւնը, որ վեց տարիներէ ի վեր կազմուած է այս քաղաքիս մէջ, իւր գաւազանը դաստիարակութեան գեղեցիկ նպատակէն եւ քաղաքիս մէջ բարի օրինակ մը եւ դպրոցաց համար մըրցման ասպարէզ մը բանալէ զատ ուրիշ որ եւ իցէ նպատակի ծառայած չէ» (Մամուլ, 1879, թ. 2310):

Ընկերութիւնը իւր «Ընկերական վարժարանը» բացած է 40 աշակերտով. 1879ին վարժարանը ունէր 70—80 աշակերտ (Անդ): 1878ին այդ վարժարանը ուրբ դասարան ունէր — անշուշտ աշակերտներու մեծ թիւով մը — եւ Կարնոյ բարձրագոյն վարժարանը կը համարուէր, որուն «խնամքը եւ պահպանողութիւնը գտնվում է մի առանձին Ընկերութեան վրայ» (Մշակ, Թիֆլիս 1878 Օգոստ. 24):

12. ...ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1874)

1874ի գարնան Կարնոյ մէջ Ընկերութիւն